Արձանագրություն 3

«Արմավիր» ՋՕԸ-ի կարիքների համար «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրով գարնանային նախապատրաստական աշխատանքների ձեռքբերման գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17 փետրվարի 2020թ. ժամը 15:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Զ. Մկրտչյան

Հանձնաժողովի անդամներ՝

Կ. Գևորգյան

Հ. Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ֆ. Մանգյան

Օրակարգ

Հայտերի գնահատման նիստի մասին

1. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

1.1 «Արմավիր» ՋՕԸ-ի կողմից թղթային եղանակով կազմակերպված «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել «Մ-Գրուպ» ՍՊԸ-ն, «Երվադա» ՍՊԸ-ն և «Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ -ն: «Երվադա» ՍՊԸ-ի և «Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտերի փաստաթղթերում առկա էր անհամապատասխանություն՝ մասնավորապես ներկայացված չէր մասնակիցների կողմից լրացված Թերությունների ակտերի բացվածքները:

1.2 «Արմավիր» ՋՕԸ -ի կողմից կազմակերպված «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Երվադա» ՍՊԸ-ին և «Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ -ին տրամադրվել էր 1 աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունը շտկելու համար՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 3-րդ մասը և 41-րդ կետը :

1.3 «Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ -ն սահմանված ժամկետներում ներկայացրել է իր կողմից լրացված Թերությունների ակտերի բացվածքը, իսկ «Երվադա» ՍՊԸ-ն չի ներկայացրել իր կողմից լրացված Թերությունների ակտերի բացվածքը: Ուստի «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժել և տվյալները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի բ/ ենթակետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

2.1 «Արմավիր» ՋՕԸ -ի կողմից կազմակերպված «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՇՁԲ-20/35» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց բավարար համարել «Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված Թերությունների ակտերի բացվածքը:

2.2 Հաշվի առնելով, որ գնման գործընթացը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն 2020թ. փետրվարի 21-ին ժամը 10:00-ին մասնակիցներն հրավիրվում են գների նվազեցման շուրջ բանակցությունների՝ որը տեղի կունենա ՀՀ, ք. Երևան, Սարմենի 1 2/1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Զ. Մկրտչյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Կ. Գևորգյան

_____ Հ. Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ֆ. Մանգյան